ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի եւ Տեղեկատվական վեճերի խորհրդի համատեղ փորձագիտական եզրակացությունը

Ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի մի շարք հոդվածների՝ Կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն Անահիտ Բախշյանի դիմումի վերաբերյալ

2012 թ. հուլիսի 12-ին Կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն, Ազգային ժողովի նախկին պատգամավոր Անահիտ Բախշյանը դիմել էր Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի 2012թ. մայիսի 4-ի «Բենզին Ռուբոն եւ Անահիտ Բախշյանը», հունիսի 15-ի «Ժառանգության» կոնսպիրատորը» եւ հուլիսի 5-ի «Ովքե՞ր են անկյուն մտածները» հոդվածների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու կապակցությամբ: Մասնավորապես, տիկին Բախշյանի պնդմամբ, հոդվածները պարունակում են վիրավորանք եւ զրպարտություն իր անձի նկատմամբ, եւ տիկին Բախշյանը ՏՎԽ-ին խնդրում էր իր պատիվն ու արժանապատվությունը վերականգնելու համար տարբերակներ առաջարկել, քանի որ չէր ցանկանում վեճը լուծել դատական կարգով: Դիտարկելով վիճարկվող հոդվածները՝ ՏՎԽ-ն եզրահանգեց, որ վեճը դատական հեռանկար չունի, իսկ ՏՎԽ-ի հիմնական առաքելությունն է՝ նպաստել տեղեկատվական վեճերով դատական գործերում օրենքի միատեսակ կիրառմանը: ՏՎԽ-ը նաեւ գտավ, որ նշված վեճն առավելապես գտնվում է մասնագիտական էթիկայի հարթության վրա եւ, մասնավորապես, հաշվի առնելով, որ հրապարակումներից մեկի՝ 2012թ. մայիսի 4-ի «Բենզին Ռուբոն եւ Անահիտ Բախշյանը» հոդվածի՝ դատական կարգով վիճարկման համար օրենքով նախատեսված վաղեմության ժամկետն արդեն սպառվել է, ՏՎԽ-ն Անահիտ Բախշյանին առաջարկեց դիմել ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմին եւ նշված վեճի առիթով ստանալ վերջինիս եզրակացությունը:

Ստանալով Անահիտ Բախշյանի դիմումը՝ 2012թ. հոկտեմբերի 1-ին ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը հրավիրեց նիստ, որի ընթացքում քննարկեց Անահիտ Բախշյանի դիմումը «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի վերոհիշյալ հոդվածների՝ մասնագիտական էթիկայի նորմերին համապատասխանության հարցը:

Համաձայն իր աշխատակարգի 5.1 հոդվածի՝ «ԴՄ-ը Ինքնակարգավորման նախաձեռնության անդամների կողմից կամ սույն աշխատակարգով նախատեսված դեպքերում՝ ոչ անդամների կողմից Վարքականոնի խախտման վերաբերյալ բողոքների քննության հիմքով կայացնում է կարծիք-եզրակացություն»:

Վերոհիշյալ երեք հոդվածները մասնագիտական էթիկայի եւ իրավունքի տեսանկյունից վերլուծության ենթարկելով՝ ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը եւ Տեղեկատվական վեճերի խորհուրդը, համապատասխանաբար, եկան հետեւյալ համատեղ եզրահանգման.

1. Ինչպես Դիտորդ մարմնին եւ ՏՎԽ-ին տեղեկացրեց տիկին Անահիտ Բախշյանը, հոդվածներից որեւէ մեկի առնչությամբ նա չի դիմել «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի

խմբագրությանը՝ հերքում կամ պատասխան հրապարակելու պահանջով: Այդ առումով ԴՄ-ն ու ՏՎԽ-ն արձանագրում են, որ տեղեկատվական վեճերի լուծման առաջնային միջոցը հենց տվյալ ԶԼՄ-ին հերքման եւ/կամ պատասխանի պահանջով դիմելն է: ՀՀ-ում համապատասխան ընթացակարգը նախատեսված է ՀՀ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածով: Ելնելով դրանից, ԴՄ-ն ու ՏՎԽ-ը գտնում են, որ նպատակահարմար կլիներ, եթե տիկին Բախշյանն օրենքով նախատեսված ժամկետում, այն է՝ մեկամսյա ժամկետում, հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը/պատասխանը, օգտվեր իր այդ իրավունքից:

2. Ինչ վերաբերում է վիճարկվող հոդվածների համապատասխանությանը լրագրողական էթիկայի կանոններին, ԴՄ-ն ու ՏՎԽ-ը գտնում են, որ երեք հոդվածներն էլ պարունակում են ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնագիտական նորմերի խախտումներ: Մասնավորապես, նշվեց այն հանգամանքը, որ բոլոր երեք հոդվածներում թերթը ներկայացրել է փաստեր դիմումատուի մասին, իսկ հոդվածներից երկուսում էլ մեջբերել է անորոշ երրորդ անձանց փոխանցմամբ՝ իբրեւ թե նրա արած հայտարարությունները, եւ ոչ մեկի դեպքում էլ այդ փաստերի եւ մեջբերվող արտահայտությունների իսկության վերաբերյալ հենց Անահիտ Բախշյանից մեկնաբանություն ստանալու համար միջոցներ չի ձեռնարկել: Այս առումով, ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի 1.1. հոդվածը սահմանում է. «Մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը…» , իսկ 1.2. հոդվածում նշվում է. «Եթե խմբագրությունը հասարակական նշանակալի տեղեկություններ է ստացել, սակայն չի կարողացել ճշտել փաստերը, հրապարակելիս անպայման նշել այդ մասին»: Վարքականոնի 1.3 հոդվածն էլ կոչ է անում լրատվամիջոցներին՝ «վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա»: Դիմումի առարկա «ՉԻ» հրապարակումներում թերթը չի հետեւել վարքականոնի դրույթներում ներառված մասնագիտական հիմնարար նորմերին:

3. Լրագրողական էթիկայի տեսանկյունից անընդունելի է նաեւ այն փաստը, որ հոդվածներում որպես աղբյուր են վկայակոչվում «շրջանառվող լուրերը»: Սա ինքնին հակասում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի՝ տեղեկատվության աղբյուրներին ներկայացվող պահանջներին, համաձայն որոնց՝ լրագրողները պետք է հնարավորինս նշեն տեղեկությունների աղբյուրները, խուսափեն տեղեկատվության կոնֆիդենցիալ աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումը տալուց առաջ պարզեն շարժառիթները:

4. Վիճարկվող հոդվածների իրավական վերլուծությունը հանգեցնում է հետեւյալ եզրակացությունների.

- Ի տարբերություն այլ մասնավոր անձանց՝ քաղաքական գործիչների գործունեությունն ավելի հրապարակային է: Այս հանգամանքով պայմանավորված՝ վերջինների դեմ ուղղված քննադատության սահմաններն առավել լայն են: Հետեւաբար, նրանք պետք է դրսեւորեն ավելի մեծ հանդուրժողականություն, քան՝ այլ մասնավոր անձինք: Ի հավելումն նշվածի, ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 5-րդ հոդվածների սահմանադրահիրավական ընդհանուր բովանդակությունից բխում է, որ ժողովրդաիշխանությունն իրականացվում է նաեւ հանրային ծառայության միջոցով, եւ այդ ծառայությունը կրող անձանց հանրային եւ մասնավոր վարքագիծն օբյեկտիվորեն կարող է հասարակական քննարկման

առարկա դառնալ: Այդ է պատճառը, որ քաղաքական գործիչների մասին հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից[1]: Տվյալ դեպքում բոլոր երեք հրապարակումներն, անկասկած, ներկայացնում են հասարակական հետաքրքրություն, քանի որ լրատվամիջոցը հասարակական քննարկման առարկա է դարձրել քաղաքական գործչի գործունեության, մտածողության եւ վարքագծի վերաբերյալ հրապարակումներ: Այս իմաստով լրատվամիջոցն իրականացրել է իր առաքելությունը, որն իր վրա դրված է հանրային իրավունքի ուժով եւ բխում է հանրային շահից: Հետեւաբար, լրատվամիջոցը չի կարող պատասխանատվության ենթարկվել զուտ այն բանի համար, որ քաղաքական գործչի մասին հրապարակել է քննադատական հոդվածներ: Սրանից բխում է, որ խնդրո առարկա հարցը պետք է դիտարկել ոչ թե լրատվանյութի մատուցման եղանակի, այլ՝ բովանդակային տեսանկյունից:

Բոլոր երեք լրատվանյութերում ներկայացվել են փաստական տվյալներ՝ այլ ոչ թե գնահատողական դատողություններ: Հետեւաբար, նույնիսկ եթե առկա է անիրավաչափ խոսք, ապա դա կարելի է գնահատել որպես զրպարտություն եւ ոչ թե վիրավորանք, քանի որ վերջինս չի կարող արտահայտված լինել փաստական տվյալներով՝ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ տեղեկությամբ[2]: Իսկ արտահայտությունը որպես զրպարտություն բնութագրելու անհրաժեշտ վավերապայմաններից են՝ արտահայտության անհամապատասխանությունն իրականությանը, ինչպես նաեւ դրանով անձի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորելը[3]: Այսպիսով, նույնիսկ եթե տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, ապա դա դեռ բավարար պայման չէ, որ տեղեկությունը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով հանդիսանա զրպարտող բնույթի, քանի որ անհրաժեշտ է նաեւ, որպեսզի տեղեկությունը լինի արատավորող բնույթի: Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ 05/07/2012թ. եւ 15/06/2012թ. հրապարակումներում շարադրված տեղեկությունները (*«Շրջանառվող լուրերի համաձայն, նախկին պատգամավոր Անահիտ Բախշյանը, որն ակտիվորեն մասնակցում էր մայոր Վահե Ավետյանի հիշատակին նվիրված բողոքի ակցիաներին, խիստ զայրացած է մյուս քաղաքական թիմերի լռությունից ու պասիվությունից: -Ասում են, նախկին օրենսդիրն անգամ զայրացել է բոլոր գործընթացներից բացակա ժառանգականների վրա՝ ասելով, որ նման դեպքում նրանք ոչ մի բանով չեն տարբերվում մյուս քաղաքական թիմերից ու նրանց ներկայացուցիչներից: Բախշյանը կոնկրետ անուններ չի տվել, թե ժառանգականներից ո՞վ է իրեն առավել շատ նյարդայնացրել, բայց եւ նշել է այն մասին, որ այսօր որոշ քաղաքական դեմքեր իրենք իրենցից վախեցած՝ ուղղակի անկյուն են մտել»: Ինչպես նաեւ՝ «Շրջանառվող լուրերի համաձայն, երեկվանից «Ժառանգության» գրասենյակում լուրջ իրարանցում է սկսվել: Դրա պատճառը, ասում են, եղել է «Ժառանգության» բլբուլ Ստյոպա Սաֆարյանի ու Անահիտ Բախշյանի թեժ լեզվակռիվը՝ կապված ներքաղաքական կյանքում տիրող առկա իրավիճակի ու ներկուսակցական որոշ խնդիրների հետ: Նույն լուրերի համաձայն, Ստյոպան Բախշյանին ասել է, որ ավելի լավ կլինի վերջինս այս ընթացքում հեռուստաէկրաններին, մասնավորապես՝ «Կենտրոնում» ու «Արմենիայում» քիչ երեւա, քանի որ դա ընդհանուր շահերից չի բխում: Ավելին,*

[1] ՀՀ Սահմանադրական դատարանի ՔԴՈ-997 որոշում, էջ 20 եւ 29:

[2] ՀՀ Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ. ԵԿԴ/2293/02/10 որոշումը Թաթուլ Մանասերյանի գործով, էջ 11:

[3] Նույն տեղում:

Սաֆարյանը Բախշյանին անգամ խորհուրդ է տվել եթերներում հյուրընկալվելուց եւ խոսելուց առաջ «ճշտվել» «Ժառանգության» լիդերների հետ: Քանի որ, ըստ «Ժառանգության» «լիդերի», «այդկերպ գոնե կտեղեկանաք, թե որ ուղղությամբ պետք է տանեք մեր քննադատությունը, եւ ում ինչ դիրքերից է պետք ուղարկել «մեսիջները»: Սակայն ասում են, որ Բախշյանը Սաֆարյանին իր տեղն է ցույց տվել՝ ասելով. «Երիտասարդ, դու դեռ պետք է մեծանաս, որ նոր ինձ բան սովորեցնես»:) օբյեկտիվորեն արատավորող բնույթի չեն, եւ նույնիսկ եթե պարզվի, որ այդ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, դրանք չեն կարող համարվել զրպարտող բնույթի:

- Այլ է 04/05/2012թ. հրապարակման մեջ տարածված փաստացի հայտարարությունը՝ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի անունից ընտրողներին շորեր բաժանելու մասին, որը, ԴՄ-ի եւ ՏՎԽ-ի կարծիքով, իր բնույթով անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություն է: Հետեւաբար, լրատվամիջոցը կրում է այդ փաստացի հայտարարության ճշմարտացիության ապացուցման բեռը, այսինքն, պետք է ապացուցի հրապարակված տեղեկության ճշմարտացիությունը կամ կրի պատասխանատվություն 1087.1 հոդվածի ուժով: Որպես պաշտպանության միջոց՝ լրատվամիջոցը կարող է բացահայտել իր աղբյուրը եւ օգտվել 1087.1 հոդվածի 6-րդ եւ 9-րդ կետերի պաշտպանությունից (պատշաճ աղբյուրից կատարած բարեխիղճ վերարտադրում), կամ օգտվել 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պաշտպանությունից՝ հիմնավորելով, որ փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, քանի որ տվյալ իրավիճակում դա պայմանավորված է եղել գերակա հանրային շահով, եւ որ լրատվամիջոցը ողջամտության սահմաններում ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել է այդ տվյալները:

ԴՄ-ը եւ ՏՎԽ-ը մեկ անգամ եւս վերահաստատում են իրենց դիրքորոշումը, որ դատարան դիմելը պետք է հանդիսանա իրավական պաշտպանության ծայրահեղ միջոց, որին խորհուրդ է տրվում դիմել միայն այն բանից հետո, երբ սպառվել են վեճերի լուծման արտադատական բոլոր հնարավոր միջոցները՝ եւ առաջին հերթին ԶԼՄ-ի հետ անմիջականորեն հաշտության հասնելը՝ հերքման, պատասխանի կամ նրա կողմից ներողության հրապարակման եղանակով:

Ընդունվել է 2012 թվականի հոկտեմբերի 1-ին